



Վճարման և քարտային հետգործառնությունների վարչության Քարտերի վճարահաշվարկային բաժնի առաջատար մասնագետ

Աշխատանքի նկարագրություն

Վճարահաշվարկային համակարգերի հետ վերջնահաշվարկի իրականացում, հաշվետվությունների մշակում, ինչպես նաև վիրտուալ սպասարկման կետերի գրանցում և սպասարկում:

Աշխատանքային պարտականություններ

- Պրոցեսինգային օրվա ամփոփում, քլիրինգի իրականացում
- Պրոցեսինգային օրվա քարտային գործարքների մշակում, սկրիպտների գործարկում և արդյունքների ստուգում
- Քլիրինգային ֆայլերի և հաշվետվությունների համեմատագրում, ստացված ֆայլերի և միջնորդավճարների ճշգրտության ստուգում
- Չմշակված քարտային գործարքների խնդիրների լուծում
- Քարտային հաշիվներով կատարված գործարքների՝ մասնավորապես ելքերի, մուտքերի, սահմանաչափերի, վարկային գծերի, SMS ծառայությունների ներմուծում Smart Vista, դրանց պատասխան ֆայլերի ստեղծում և ուղարկում համապատասխան ստորաբաժանմանը՝ ՀԾ Բանկ ներմուծելու համար
- Արտարժույթային կուրսերի ֆայլերի ներմուծում Smart Vista համակարգ և դրանց պատասխան ֆայլերի ստեղծում և ուղարկում համապատասխան ստորաբաժանմանը՝ ՀԾ Բանկ ներմուծելու համար
- Պրոցեսինգային ֆայլերի և հաշվետվությունների համեմատագրում ՀԾ Բանկ համակարգում, ծառայողական գրությունների պատրաստում
- VISA, MasterCard վճարահաշվարկային համակարգերի հետ քլիրինգային ֆայլերի փոխանակում
- Պրոցեսինգային համակարգում նոր տերմինալների, այդ թվում ԱԳՄ-երի գրանցում
- Ինտերնետային առևտրի և սպասարկման կետերի գրանցում և սպասարկում ՀԾ Բանկ և Smart Vista համակարգերում, պայմանագրերի կնքում

Անհրաժեշտ պահանջներ

- Բարձրագույն տնտեսագիտական, մաթեմատիկական կամ տեխնիկական կրթություն
- Վճարահաշվարկային համակարգերի հետ աշխատանքի առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ
- Բանկային համակարգում առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ

- Վճարահաշվարկային համակարգերի գործունեությունը կարգավորող օրենսդրության իմացություն
- Ms Office-ի տիրապետում
- Հայերենի գերազանց տիրապետում
- Ռուսերենի և անգլերենի լավ իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 21.06.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Leading specialist of Card Payment & Settlement Unit - Name, Surname":